**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/43395-2022

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Նարիբեկյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայրենիքի պաշտպանության համար զոհված զինծառայողի ընտանիքի անդամների երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-451-02.12.2022-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1557 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պետրոս Քացախյան

Ազգային ժողովի հետ կապերի վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող

Հեռ. 010515686

Էլ փոստ՝ petros.qatsakhyan@gov

«ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-451-02.12.2022-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայրենիքի պաշտպանության համար զոհված զինծառայողի ընտանիքի անդամների երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է օրենքով սահմանել հայրենիքի պաշտպանության համար զոհված զինծառայողի ընտանիքի անդամների երաշխիքները, դրանց տրամադրման պայմաններն ու կարգը, ինչպես նաև ֆինանսավորման աղբյուրները:

Նախագծին կից ներկայացված հիմանվորման համաձայն՝

«Հանուն Հայրենիքի իրենց կյանքը զոհաբերած անձանց ընտանիքների անդամների բարեկեցիկ կյանքն ապահովելը յուրաքանչյուր երկրի և ժողովրդի համար պետք է լինի պատվի և արժանապատվության հարց, իսկ յուրաքանչյուր պետության համար՝ առաջնահերթություն: Արցախյան 44-օրյա պատերազմն իր հետևից բերեց նաև բազում խնդիրներ իրական կյանքում այն ընտանիքների համար, ովքեր կորցրեցին ընտանիքի հիմնական կերակրողին: Այսօր գործող օրենսդրությամբ սահմանված են որոշակի երաշխիքներ զոհված զինծառայողների ընտանիքների անդամների համար: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի համաձայն՝ զոհված զինծառայողների ընտանիքներն ստանում են դրամական հատուցում, որի մի մասը՝ 10 մլն դրամը վճարվում է միանվագ, իսկ մնացած մասը՝ ամսական հավասար վճարներով 20 տարվա ընթացքում:

Համապատասխան երաշխիքներ և արտոնություններ են սահմանված նաև մի շարք այլ օրենքներով: Սակայն, վերը նշված երաշխիքները և արտոնությունները, դրանց տրամադրման ընթացակարգերը ոչ միշտ են կրում ինստիտուցիոնալ բնույթ: Խնդրո առարկա է նաև այն հանգամանքը, որ բացակայում է այդ արտոնությունների և երաշխիքների տրամադրման համար պատասխանատու մեկ միասնական մարմինը: Արդյունքում, շահառուն այս կամ այն երաշխիքից կամ արտոնությունից օգտվելու համար ստիպված է լինում բախել տարատեսակ դռներ: Երբեմն, պոտենցիալ շահառուի համար մեծ դժվարություն է ներկայացնում ոչ միայն այս կամ այն երաշխիքից կամ արտոնությունից օգտվելը, այլև հենց այդ երաշխիքի կամ արտոնության ու դրանց տրամադրման ընթացակարգերի մասին տեղեկատվություն ստանալը: Արդյունքում, երբեմն դրանք մնում են թղթի

վրա, այսինքն՝ կրում են ձևական բնույթ:

Այդ նպատակով առաջարկվում է Հայրենիքի պաշտպանության համար զոհված զինծառայողի ընտանիքի անդամների համար սահմանել հետևյալ երաշխիքները՝

1) հիփոթեքային վարկը մարելու նպատակով ընտանիքի անդամի աջակցությունը.

2) ընտանիքի անդամի որոշակի ծախսերի փոխհատուցումը.

3) ընտանիքի անդամի այլ արտոնություններ:

Հիփոթեքային վարկը մարելու նպատակով ընտանիքի անդամի աջակցությունը ներառում է՝

1) զոհված զինծառայողի հիոթեքային վարկի պարտավորությունների մարումը, այդ թվում՝ զոհվելու օրվա դրությամբ ժամկետանց պարտավորությունների մարումը և վարկի ամբողջական մարումները զինծառայողի զոհվելու օրվան հաջորդող 18 ամիսների համար.

2) հիփոթեքային վարկով ձեռք բերված բնակելի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը զինծառայողի ընտանիքի անդամին անցնելու (ընտանիքի անդամի անվամբ գրանցվելու) դեպքում՝

ա. այդ օրվա դրությամբ վարկի ժամկետանց պարտավորությունների (մայր գումարի և սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների) միանվագ մասնակի մարումը,

բ. այդ օրվանից հետո հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների մասնակի վճարումը.

3) զինծառայողի զոհվելու օրվա դրությամբ կամ դրանից հետո ընտանիքի անդամին տրված հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների մասնակի վճարումը կամ այդ ուղղությամբ կատարված ծախսերի մասնակի փոխհատուցումը, եթե զինծառայողի ընտանիքի անդամներից մեկն ունի այդ հիփոթեքային վարկով ձեռք բերված բնակելի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք:

Ընտանիքի անդամի որոշակի ծախսերի փոխհատուցումը ներառում է՝

1) ընտանիքի անդամի առողջապահական ծախսերի մասնակի փոխհատուցում. 2) ընտանիքի անդամի կրթական ծախսերի փոխհատուցում, այդ թվում՝ աշխարհի լավագույն հաստատություններում սովորելու ուսման վարձի և կեցության ծախսերի վճարում.

3) զինծառայողի զոհվելու օրվա դրությամբ ընտանիքի անդամին պատկանող գյուղատնտեսական նշանակության հողի համար փաստացի վճարված անշարժ գույքի հարկի, այդ հողի ոռոգման ջրի վարձավճարի գումարի ամբողջական փոխհատուցում. 4) զինծառայողի զոհվելու օրվա դրությամբ ընտանիքի անդամին պատկանող անշարժ գույքի համար փաստացի վճարված անշարժ գույքի հարկի գումարի ամբողջական փոխհատուցում.

5) ընտանիքի անդամների բնակության վայրի հասցեում սպառված

էլեկտրաէներգիայի և բնական գազի ծախսերի մասնակի փոխհատուցում՝ հաշվի առնելով այդ հասցեում բնակվող ընտանիքի անդամների և այլ անձանց թիվը:

Ընտանիքի անդամների այլ արտոնությունները ներառում են՝

1) զոհված զինծառայողի ընտանիքի անդամի իրավունքը՝ արտահերթ ընդունվելու բնակչության սոցիալական պաշտպանության և խնամքի պետական կազմակերպություններ, արտահերթ (անմիջապես) ստանալու առողջապահական ծառայություններ պետական բյուջեի միջոցների հաշվին.

2) զոհված զինծառայողի երեխայի իրավունքը՝ արտահերթ ընդունվելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող նախադպրոցական ուսումնական հաստատություն (մանկապարտեզ), հանրակրթական ուսումնական հաստատություն (դպրոց)՝ անկախ բնակության վայրից, բացառությամբ եթե այդ ուսումնական հաստատություն ընդունելությունը իրականացվում է մրցութային կարգով:»:

Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների՝ ներառյալ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամների սոցիալական երաշխիքները սահմանված են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին», «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» և այլ օրենքներով, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով, ինչպես նաև այդ օրենսդրական ակտերի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ ակտերով: Նախագծով սահմանված երաշխիքների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ երաշխիքների մեծ մասը ներկայումս սահմանված են այլ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով, սակայն օրենքի նախագծով անդրադարձ չի կատարվում օրենքի նախագծի ընդունման արդյունքում գործող օրենքներով և կարգավորիչ այլ ակտերով սահմանված նույնաբովանդակ երաշխիքների հարաբերակցությանը, որի պարագայում առաջանում են հակասություններ, անհարկի կրկնություններ և փաստացի ապահովված չէ օրենքի ընդունման նպատակը՝ բոլոր երաշխիքները սահմանել մեկ միասնական օրենքով և դրանց ապահովումն իրականացնել մեկ լիազոր մարմնի կողմից:

Անդրադառնալով օրենքի նախագծով առաջարկվող սոցիալական երաշխիքների տեսակներին, հայտնում ենք հետևյալը՝

1) հիփոթեքային վարկը մարելու նպատակով աջակցության հետ կապված սոցիալական երաշխիքները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թ. օգոստոսի 22-ի N 1091-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի սպայական ու ավագ

ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերման կամ բնակելի տան կառուցման նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման կարգի N 1 հավելվածի 8-րդ կետում, որի պահանջների համաձայն՝ վարկավորման ծրագրի ընթացքում Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զինծառայողի զոհվելու (մահանալու) դեպքում, դեպքի օրվա դրությամբ, նրա ընտանիքի հիփոթեքային վարկի չմարված գումարն ամբողջությամբ մարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին.

2) ընտանիքի անդամի որոշակի ծախսերի փոխհատուցման շրջանակներում՝

ա. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 64-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համաձայն՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապով զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամները բժշկական օգնությամբ ապահովվում են սույն հոդվածով սահմանված կարգով, իսկ հոդվածի պահանջների համաձայն՝ զինծառայողները, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ապահովվում են որակյալ բժշկական օգնությամբ՝ համապատասխան գերատեսչական ռազմաբժշկական հաստատություններում: Այլ բժշկական հաստատություններում զինծառայողները և նրանց ընտանիքների անդամները բժշկական օգնություն և սպասարկում ստանում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամների՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման պայմանները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թ. մարտի 4-ի N 318-N որոշմամբ,

բ. օրենքի 67-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ պետությունը երաշխավորում է ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողների մինչև 27 տարեկան զավակների, ծնողների, ամուսնու (կնոջ)՝ Հայաստանի Հանրապետությունում գործող հավատարմագրված բարձրագույն և պետական ու հավատարմագրված ոչ պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ ընդհանուր մրցույթից դուրս, առանձին մրցույթով

(քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում) ընդունելությունը և ուսումնառությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Պետությունը սույն հոդվածով սահմանված ուսումնական հաստատությունների վճարովի համակարգի այն սովորողներին, որոնք ուսումնառության ընթացքում ձեռք են բերել սույն հոդվածով նախատեսված կարգավիճակ, տրամադրում է ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Համապատասխան ընթացակարգերը սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. հուլիսի 27-ի N 1183-Ն և 2012 թ. ապրիլի 26-ի N 597-Ն որոշումներով,

գ. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ անշարժ գույքի հարկից ազատվում են՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված կամ ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած կամ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց (կամ նրանց ընտանիքի անդամներին) սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքը՝ մինչև այդ անձանց զավակներից մեկի 18 տարին լրանալը, իսկ եթե անձն ամուսնացած չի եղել կամ չունի (չի ունեցել) զավակներ՝ մինչև հարկման օբյեկտի նկատմամբ ընտանիքի անդամի սեփականության իրավունքի դադարելը,

դ. սոցիալապես անապահով ընտանիքների կողմից սպառվող բնական գազի, էլեկտրական էներգիայի և նրանց մատուցվող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների սակագների մեղմացման միջոցառումները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թ. նոյեմբերի 3-ի N 1122-Ն, իսկ սահմանամերձ բնակավայրերի բնակչությանը տրամադրվելիք բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի սակագնի մասնակի ու գույքահարկի և հողի հարկի փոխհատուցման պայմանները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թ. դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշումներով.

3) ընտանիքի անդամների այլ արտոնությունների շրջանակներում՝

ա. Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը չի նախատեսում բնակչության սոցիալական պաշտպանության և խնամքի պետական կազմակերպություններ ընդունելության հերթագրում և նման խնդիր ու դրա կարգավորման անհրաժեշտություն առկա չէ,

բ. «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի պահանջների համաձայն՝ նախադպրոցական ուսումնական հաստատություն ընդունվելու առաջնահերթության իրավունքից, ըստ

կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի, օգտվում են առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամություն կամ երեք և ավելի երեխա ունեցող կամ զինծառայող ծնողի (ծնողների) երեխաները:

Ամփոփելով օրենքի նախագծի բովանդակային կարգավորումների վերաբերյալ նկատառումները, անհրաժեշտ է նաև փաստել, որ նախագծով առաջարկվող սոցիալական երաշխիքների ձևակերպումները հստակ չեն, օգտագործվող տերմինները չեն համապատասխանում գործող օրենսդրական ակտերի պահանջներին, սոցիալական երաշխիքների իրացման պայմանները տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք են տալիս:

Նախագծում առկա են նաև խնդրահարույց կարգավորումներ: Մասնավորապես՝

1) նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասով տրված է «սեփականության իրավունք» հասկացության բացատրությունը, մինչդեռ, սեփականության իրավունքն արդեն իսկ սահմանված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով: Բացի այդ անհասկանալի է, թե գնման իրավունքն ինչ տրամաբանությամբ է ներառված սեփականության իրավունքի մեջ.

2) նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազոր մարմնին, սույն օրենքի համաձայն, տեղեկություններ և փաստաթղթեր են տրամադրում Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող բանկերը և վարկային կազմակերպությունները: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող բանկերը և վարկային կազմակերպությունները լիազոր մարմնին են տրամադրում տեղեկություններ հիփոթեքային վարկերի վերաբերյալ: Իսկ 4-րդ մասի համաձայն՝ նշված տեղեկությունները և փաստաթղթերը լիազոր մարմնին տրամադրելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

«Բանկային գաղտնիքի մասին» օրենքով հստակ նախատեսված են կառուցակարգեր, առ այն, որ երրորդ անձինք, այդ թվում՝ պետական մարմինները, բանկային գաղտնիք կարող են ստանալ անձի համաձայնությամբ կամ դատարանի որոշման առկայության պայմաններում.

3) նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազոր մարմնին տեղեկություններ և փաստաթղթեր է տրամադրում առողջապահության ոլորտի լիազոր մարմինը: Սակայն նախագծում հստակեցված չէ՝ ինչ տեղեկություններ և փաստաթղթեր տրամադրելուն է վերաբերում կարգավորումը:

Համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի՝ առանց անձի համաձայնության արգելվում է

հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակելը, բացառությամբ, երբ տվյալի մշակումն ուղղակիորեն նախատեսված է օրենքով: Նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի՝ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ են հանդիսանում, ի թիվս այլնի, առողջական վիճակին վերաբերող տեղեկությունները: Իր հերթին, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ բժշկական գաղտնիք համարվող տվյալները կարող են փոխանցվել պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնությամբ, բացառությամբ օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերի: Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է այն դեպքերի շրջանակը, երբ բժշկական գաղտնիք համարվող տվյալները կարող են փոխանցվել առանց պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության: Հարկ է նկատել, որ նախագծում նկարագրված դեպքը ներառված չէ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասում, որի պայմաններում բժշկական գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը կարող է տրամադրվել ընդհանուր հիմունքներով.

4) նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասով առաջարկվում է սահմանել, որ եթե հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարները վճարվել են կամ այդ ուղղությամբ կատարված ծախսերը փոխհատուցվել են նույն հոդվածով սահմանված կարգով պետական բյուջեի միջոցների հաշվին, այդ տոկոսների գումարները Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 160-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով վերադարձման ենթակա չեն:

Վերոգրյալի կապակցությամբ, հայտնում ենք, որ ֆիզիկական անձանց կողմից բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու, կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով ստացված հիփոթեքային վարկերի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների մասով եկամտային հարկի վերադարձման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են օրենսգրքի 160-րդ հոդվածով և օրենքներով եկամտային հարկի վերադարձման հետ կապված հարաբերություններ կարգավորված չեն: Ընդ որում, օրենսգրքի 160-րդ հոդվածով սահմանված՝ եկամտային համակարգից օգտվելու հանգամանքն այլ աջակցության ծրագրերից օգտվելու հետ կապված չէ:

Մյուս կողմից, առաջարկությունն անխուսափելիորեն հանգեցնելու է հարկային վարչարարության բարդությունների՝ հաշվի առնելով այն, որ կլինեն վարձու աշխատողներ, որոնք կօգտվեն ինչպես հիփոթեքային վարկերի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարի վերադարձման գործող համակարգից, այնպես էլ նախագծով առաջարկվող աջակցության համակարգից: Մասնավորապես, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ վճարված եկամտային հարկի միևնույն գումարը չի կարող վերադարձվել և՛ որպես տոկոսային գումար, և՛ որպես նախագծով

առաջարկվող աջակցության գումար, ստացվում է, որ այդ գումարներն առանձնացված և աճողական ձևով հաշվառելու անհրաժեշտություն է առաջանալու, ընդ որում՝ անձի նույնականացմամբ: Հակառակ պարագայում կստացվի, որ վարձու աշխատողը պետական բյուջեից ստանում է ավելի շատ գումար, քան իր կողմից վճարված եկամտային հարկի գումարն է: Ընդ որում, տեղեկացնում ենք, որ եկամտային հարկի գումարների վերադարձը ներկայումս իրականացվում է ինքնաշխատ եղանակով «Հարկատու 3» ծրագրային համակարգի միջոցով և առաջարկության ընդունման դեպքում անհրաժեշտություն է առաջանալու փոփոխություններ կատարել նաև այդ համակարգում:

Այս առումով հայտնում ենք, որ օրենսգրքից տարբերվող՝ այլ օրենքներով եկամտային հարկի վերադարձման հետ կապված հարաբերություններ կարգավորելը և օրենսգրքի 160-րդ հոդվածով սահմանված՝ եկամտային համակարգից օգտվելու իրավունքն այլ աջակցության ծրագրերից օգտված լինելու հետ պայմանավորելն ընդունելի չէ:

Անդրադառնալով նախագծի ընդունման նպատակահարմարությանը՝ հայտնում ենք հետևյալը՝

1) նախագծով նախատեսվում է Հայրենիքի պաշտպանության համար զոհված զինծառայողի ընտանիքի անդամների համար սահմանել լրացուցիչ սոցիալական երաշխիքներ: Մասնավորապես, առաջարկվում են հիփոթեքային վարկը մարելու նպատակով ընտանիքի անդամի աջակցությունը, ընտանիքի անդամի որոշակի ծախսերի փոխհատուցումը և ընտանիքի անդամի այլ արտոնություններ: Միաժամանակ նախատեսվում է, որ նախագծով նախատեսված երաշխիքները չեն բացառում զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին այլ իրավական ակտերով սահմանված երաշխիքների տրամադրումը:

Այս առումով հարկ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ, արդեն իսկ սահմանված են համապատասխան երաշխիքներ և արտոնություններ զոհված զինծառայողների ընտանիքների անդամների համար, որոնք, մեր կարծիքով, անհրաժեշտ ու բավարար են նախագծի հիմնավորմամբ ներկայացված նպատակներին հասնելու համար:

Միաժամանակ հարկ է նկատի ունենալ, որ իրեն սոցիալական հռչակած պետությունը սահմանադրորեն որդեգրել է սոցիալական քաղաքականության վերաբերյալ հստակ ուղենիշներ, որոնք, ըստ էության, մեկնաբանվել ու բացահայտվել են Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2014 թվականի ապրիլի 2-ի N ՍԴՈ-1142 որոշման մեջ:

Այսպես, վկայակոչված որոշմամբ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն ընդգծել է, որ սոցիալական քաղաքականության ոլորտում համաչափության և համամասնականության

հիմնարար սկզբունքների պահանջներից ելնելով՝ հայեցողության սահմանները պայմանավորվում են, մի կողմից, պետության սոցիալ-տնտեսական հնարավորություններով, մյուս կողմից, սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներով: Այլ կերպ ասած, պետությունը սոցիալական քաղաքականության մշակման հարցում օժտված լինելով հայեցողությամբ, միևնույն ժամանակ սահմանափակված է այնպիսի հարաչափերով, ինչպիսիք են, մի կողմից, պետության տնտեսական ու ֆինանսական ընթացիկ հնարավորությունները և, մյուս կողմից, պետության սոցիալական բնույթից բխող պոզիտիվ պարտավորությունը հասարակության համար ապահովելու ընդհանուր բարեկեցության և սոցիալական համերաշխության համար գործուն նախադրյալներ.

2) նորմատիվ իրավական ակտի ընդունման հիմնավորման ճիշտ կառուցվածքը և բովանդակությունն ունեն առանցքային նշանակություն, հետևաբար իրավական ակտի հիմնավորման մեջ պետք է ներառել իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, ընթացիկ իրավիճակը և խնդիրները, տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը, կարգավորման նպատակը, բնույթը և ակնկալվող արդյունքը:

Այնինչ, տվյալ դեպքում նախագծին կից ներկայացված հիմնավորումից հնարավոր չէ լիարժեք ձևով գնահատել ներկայացված նախագծի արդյունա-վետությունը, քանի որ բացակայում են ընթացիկ իրավիճակի, խնդիրների համա-պատասխան վերլուծությունները, ինչն էական նշանակություն և կարևորություն ունի ներկայացված առաջար-կությունների հիմնավորվածությունը լիարժեք ձևով գնահատելու համար:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, 2014 թվականի դեկտեմբերի 2-ի N ՍԴՈ–1176 որոշմամբ անդրադառնալով օրենքների հիմնավորվածությանը, արձանագրել է. «սահմանադրական դատարանը կարևորում է օրենսդրական փոփոխությունների գործընթացի կայունությունն ու ներդաշնակությունը, օրենքների փոփոխման հիմնավորվածությունն ու օբյեկտիվ անհրաժեշտությունը, ինչը հնարավո-րություն է ընձեռում իրավունքի սուբյեկտին իր վարքագիծը համապատասխանեցնել փոփոխվող օրենսդրական նորմերին՝ թույլ չտալով իրավակիրառ մարմինների կողմից ցուցաբերված սուբյեկտիվիզմի դրսևորում և հայեցողության ընդլայնում:»:

Այս առումով գտնում ենք, որ նախագծին կից ներկայացված հիմնավորումից լիարժեք չի բացահայտվում օրենքի ընդունման անհրաժեշտությունը:

Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թթ. ծրագրի «1. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1.3-րդ ենթաբաժնում նշված է՝ «Կառավարության ուշադրության կենտրոնում մշտապես եղել և լինելու է զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության

բարձրացումը, ուստի Կառավարությունը մեծացնելու է զինծառայողների նյութական և սոցիալական ապահովման երաշխիքները, կատարելագործելու է զինծառայության գրավչության և զինծառայողի հեղինակության բարձրացման մեխանիզմները: Զինծառայողների աշխատավարձերի և այլ վճարների բարձրացումը, բնակարանային ապահովման ուղղությամբ Կառավարության ծրագրերը, պատերազմի հետևանքներն իրենց վրա կրող զինծառայողների սոցիալական և առողջապահական ծրագրերը նոր թափ են ստանալու:»: Ըստ այդմ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված N 2 հավելվածում՝ (Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների հիմնավորումները) Պաշտպանության նախարարության մասում նախատեսված են սոցիալական բնույթի միջոցառումներ և հիմնավորումները, մասնավորապես՝

- Զինծառայողների, նրանց հավասարեցված անձանց և նրանց ընտանիքների անդամների, զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամների և հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների համար սոցիալ-իրավական աջակցության և խորհրդատվական ծառայությունների ինչպես նաև գործող և նոր ընդունված օրենսդրական ակտերի օպերատիվ և հանրամատչելի պարզաբանումների տրամադրում,
- Զինծառայողների, նրանց հավասարեցված անձանց և նրանց ընտանիքների անդամների, զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամների և հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների սոցիալական պաշտպանության ապահովման ուղղությամբ իրականացվող գործառույթների և մատուցվող ծառայությունների շրջանակներում պետական տեղեկատվական շտեմարաններին (ՔԿԱԳ մարմին, կադաստրի տեղեկատվական կենտրոն, բնակչության պետական ռեգիստր) հասանելիության ապահովում:

Պաշտպանության նախարարության նախաձեռնությամբ մշակվել և կառավարությունում շրջանառվում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, համաձայն որի՝ օրենքի 71-րդ հոդվածում սահմանվելու է, որ սույն օրենքով սահմանված սոցիալական ապահովության իրավունքներից և երաշխիքներից օգտվելու նպատակով զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամի, ինչպես նաև հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողի կարգավիճակը

հաստատող տեղեկանքը տրվում է պետական լիազոր մարմինների՝ սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանումների կողմից, իսկ տեղեկանքի տրման կարգը, դրա համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և տեղեկանքի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Նախատեսվում է տեղեկանքի ձևում, ըստ շահառուների կարգավիճակի, ներառել նաև օրենսդրությամբ համապատասխան կարգավիճակ ունեցող շահառուի համար սահմանված բոլոր սոցիալական երաշխիքների վերաբերյալ տեղեկատվությունը, դրանով իսկ ապահովելով շահառուների կողմից օրենսդրությամբ սահմանված բոլոր սոցիալական երաշխիքների մասին տեղեկատվություն ունենալու իրավունքը:

Ամփոփելով վերոգրյալը, նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ նախագծով Հայաստանի Հանրապետության կառավարությունն ստանձնելու է չգնահատված պայմանական պարտավորություններ, Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ձեռնպահ մնալ օրենքի նախագծի ընդունումից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1557-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ

Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
Ն. ՓԱՇԻՆՅԱՆ
Երևան

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Արման Սարգսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայրենիքի պաշտպանության համար զոհված զինծառայողի ընտանիքի անդամների երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Խ-451-02.12.2022-ՊԱ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

30.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքով սահմանվում են հայրենիքի պաշտպանության համար զոհված զինծառայողի ընտանիքի անդամների երաշխիքները, դրանց տրամադրման պայմաններն ու կարգը, ինչպես նաև ֆինանսավորման աղբյուրները:

Հոդված 2. Օրենքում կիրառվող հասկացությունները

1. Սույն օրենքում հասկացությունները կիրառվում են հետևյալ իմաստով,

1) **զոհված զինծառայող՝** զինծառայող, ով զոհվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի գործողությունների հետևանքով՝ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողության (այսուհետ՝ մարտական գործողությունների) հետևանքով կամ մահացել է մարտական գործողություններից հետո՝ մարտական գործողությունների հետևանքով ստացած վնասվածքներից,

2) **ընտանիքի** անդամ՝ **զոհված զինծառայողի** ծնողը (հարազատ հայրը և մայրը, բացառությամբ այն դեպքերի, երբ ծնողը դատական կարգով զրկվել է ծնողական իրավունքներից), որդեգրողը, ամուսինը, ինչպես նաև երեխան (զավակը)՝ մինչև 25 տարին լրանալը,

3) **բնակելի անշարժ գույք՝** Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունեցող բնակելի անշարժ գույք,

4) **սեփականության իրավունք՝** Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունեցող՝ բնակելի անշարժ գույքի նկատմամբ սեփականության (այդ թվում՝ ընդհանուր սեփականության) իրավունք կամ կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքից անշարժ գույք գնելու իրավունք,

Հոդված 3. Ընտանիքի անդամների երաշխիքները

1. Սույն օրենքով ընտանիքի անդամների համար սահմանվում են հետևյալ երաշխիքները.

1) հիպոթեկային վարկը մարելու նպատակով ընտանիքի անդամի աջակցությունը,

2) ընտանիքի անդամի որոշակի ծախսերի փոխհատուցումը,

3) ընտանիքի անդամի այլ արտոնություններ:

2. Սույն հոդվածով նախատեսված երաշխիքները տրամադրելու դեպքերը, պայմանները և կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Սույն օրենքով նախատեսված երաշխիքները չեն բացառում զոհված զինծառայողների ընտանքիների անդամներին այլ իրավական ակտերով երաշխիքների տրամադրումը:

Հոդված 4. Զոհված զինծառայողի ընտանիքի անդամների երաշխիքների ֆինանսավորումը

1. Սույն օրենքով սահմանված երաշխիքները ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներից:

Հոդված 5. Զոհված զինծառայողի ընտանիքի անդամների երաշխիքների ոլորտում լիազոր մարմինը

1. Զոհված զինծառայողի ընտանիքի անդամների երաշխիքների ոլորտում լիազոր մարմինը (այսուհետ նաև՝ լիազոր մարմին) սահմանում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

Հոդված 6. Լիազոր մարմնի լիազորությունները, լիազոր մարմնին տեղեկություններ և փաստաթղթեր տրամադրելը

1. Լիազոր մարմինը.

1) իրականացնում է զոհված զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամների կենտրոնացված հաշվառում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով,

2) համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ՝ ապահովելով սույն օրենքով սահմանված երաշխիքների տրամադրումը,

3) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից ստանում է սույն օրենքով սահմանված երաշխիքների տրամադրումն ապահովելու համար անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր,

4) իրականացնում է սույն օրենքից բխող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

2. Լիազոր մարմնին, սույն օրենքի համաձայն, տեղեկություններ և փաստաթղթեր են տրամադրում Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող բանկերը և վարկային կազմակերպությունները, ինչպես նաև.

1) առողջապահության ոլորտի լիազոր մարմինը,

2) հարկային մարմինը,

3) ՔԿԱԳ մարմինները,

4) կադաստրի կոմիտեն,

5) տեղական ինքնակառավարման մարմինները,

6) այլ պետական մարմինները և այլ կազմակերպությունները:

3. Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող բանկերը և վարկային կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում լիազոր մարմնին են տրամադրում բացառապես սույն օրենքով նախատեսված երաշխիքների տրամադրումն ապահովող տեղեկություններ սույն օրենքով սահմանված հիպոթեկային վարկերի վերաբերյալ:

4. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված տեղեկությունները և փաստաթղթերը լիազոր մարմնին տրամադրելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 7. Հիպոթեկային վարկը մարելու նպատակով ընտանիքի անդամի աջակցությունը

1. Հիպոթեկային վարկը մարելու նպատակով ընտանիքի անդամի աջակցությունը ներառում է,

1) զոհված զինծառայողին տրված հիպոթեկային վարկի՝ զինծառայողի զոհվելու օրվա դրությամբ ժամկետանց պարտավորությունների (մայր գումարի և սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների) ամբողջական միանվագ մարումը, ինչպես նաև հիպոթեկային վարկի (մայր գումարի և սպասարկման համար վճարվող տոկոսների) ամբողջական մարումները զինծառայողի զոհվելու օրվան հաջորդող 18 ամիսների համար, կամ այդ ուղղությամբ ընտանիքի անդամի կատարած ծախսերի ամբողջական փոխհատուցումը, եթե զոհված զինծառայողը կամ նրա ընտանիքի որևէ անդամը ունի այդ հիպոթեկային վարկով ձեռք բերված բնակելի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք,

2) զոհված զինծառայողին տրված հիպոթեկային վարկով ձեռք բերված բնակելի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը զինծառայողի ընտանիքի անդամին անցնելու (ընտանիքի անդամի անվամբ գրանցվելու) դեպքում՝

ա. սեփականության իրավունքը զինծառայողի ընտանիքի անդամին անցնելու օրվա դրությամբ հիպոթեկային վարկի ժամկետանց պարտավորությունների (մայր գումարի և սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների) միանվագ մասնակի մարումը,

բ. սեփականության իրավունքը զինծառայողի ընտանիքի անդամին անցնելու օրվանից հետո հիպոթեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների մասնակի վճարումը կամ այդ ուղղությամբ կատարված ծախսերի մասնակի փոխհատուցումը,

3) զինծառայողի զոհվելու օրվա դրությամբ ընտանիքի անդամին տրված հիպոթեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների մասնակի վճարումը կամ այդ ուղղությամբ կատարված ծախսերի մասնակի փոխհատուցումը, եթե զինծառայողի ընտանիքի անդամներից մեկն ունի այդ հիպոթեկային վարկով ձեռք բերված բնակելի անշարժ գույքի

նկատմամբ սեփականության իրավունք,

4) զինծառայողի զոհվելուց հետո ընտանիքի անդամին տրված հիպոթեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների մասնակի վճարումը կամ այդ ուղղությամբ կատարված ծախսերի մասնակի փոխհատուցումը, եթե զինծառայորի ընտանիքի անդամներից մեկն ունի այդ հիպոթեկային վարկով ձեռք բերված բնակելի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք:

2. Սույն հոդվածով սահմանված երաշխիքները չեն տրամադրվում, եթե հիպոթեկային վարկի կապակցությամբ առկա է դատական վարույթ:

3. Եթե հիպոթեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարները վճարվել են կամ այդ ուղղությամբ կատարված ծախսերը փոխհատուցվել են սույն հոդվածով սահմանված կարգով՝ պետական բյուջեի միջոցների հաշվին, այդ տոկոսների գումարները Հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով վերադարձման ենթակա չեն:

4. Եթե հիպոթեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարները Հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասով վերադարձվել են, ապա այդ ուղղությամբ կատարված ծախսը սույն հոդվածով սահմանված կարգով չի փոխհատուցվում:

5. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գումարները տրամադրելու պայմանները և կարգը, 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված՝ մարման, վճարման կամ փոխհատուցման ենթակա գումարների չափերը (առավելագույն չափերը) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Եթե սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված անշարժ գույքը զինծառայողին կամ նրա ընտանիքի անդամին պատկանում է ընդհանուր սեփականության իրավունքով, ապա սույն հոդվածի 5-րդ մասի հիման վրա մարումը կատարվում է (գումարը վճարվում կամ ծախսը փոխհատուցվում է) սեփականության իրավունք ունեցող՝ ընտանիքի անդամ հանդիսացող անձանց թվին համամասնորեն: Սույն մասում նշված համամասնությունը որոշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող՝ ընտանիքի անդամ հանդիսացող անձանց թիվը ընտանիքի անդամ չհանդիսացող անձանց թվի վրա բաժանելու միջոցով: Ընդ որում, սույն մասում նշված դեպքում զոհված զինծառայողի երեխայի (զավակի) հետ համատեղ բնակվող՝ մյուս ծնողը համարվում է ընտանիքի անդամ (անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող՝ ընտանիքի անդամ չհանդիսացող անձանց թվաքանակում չի հաշվառվում):

7. Սույն հոդվածի 1-ին մասում նշված դեպքերում փոխհատուցում տրվում է զոհվածի ընտանիքի՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անդամներից մեկին, բացառությամբ այն դեպքերի, երբ սեփականության իրավունք ունեցող անդամը դիմում է իր մասնաբաժինը առանձին ստանալու համար:

8. Հիպոթեկային վարկը մարելու նպատակով ընտանիքի անդամի աջակցությունը տրամադրվում է ընտանիքի բոլոր անդամներին և տարածվում է նրանց տրված հիպոթեկային բոլոր վարկերի վրա՝ հաշվի առնելով սույն օրենքի դրույթները:

9. Հիպոթեկային վարկը մարելու նպատակով ընտանիքի անդամի աջակցության գումարները չեն կարող ուղղվել ժամկետանց պարտավորությունների համար հաշվարկված տույժերի և տուգանքների վճարմանը:

Հոդված 8. Ընտանիքի անդամի որոշակի ծախսերի փոխհատուցումը

1. Ընտանիքի անդամի որոշակի ծախսերի վտխհատուցումը ներառում է.

1) ընտանիքի անդամի համար Հայաստանի Հանրապետությունում կատարված առողջապահական ծախսերի (բացառությամբ պետական և տեղական ինքնակառավարման բյուջեների միջոցների հաշվին կատարված ծախսերի) մասնակի փոխհատուցում,

2) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված (լիցենզավորված) կրթական հաստատություններում զոհված զինծառայողի երեխայի (զավակի) և զոհված զինծառայողի ծնողների՝ 25 տարին չլրացած մյուս երեխաների (զավակների) ուսման վարձի մասնակի կամ ամբողջական վճարում կամ փաստացի այդ ուղղությամբ կատարված ծախսերի (բացառությամբ պետական և տեղական ինքնակառավարման բյուջեների միջոցների հաշվին կատարված ծախսերի) փոխհատուցում՝ հաշվի առնելով զոհված զինծառայողի երեխաների (զավակների) թիվը,

3) Աշխարհի լավագույն բարձրագույն օտարերկրյա ուսումնական հաստատությունների ակադեմիական վարկանիշավորման http://www.shanghairanking.com կայքի՝ տվյալ տարվա ցանկերի առաջին հինգ տասնյակում ընդգրկված հաստատություններում զոհված զինծառայողի 25 տարին չլրացած երեխայի (զավակի) առկա ուսուցմամբ սովորելու ուսման վարձի և կեցության ծախսերի վճարում,

4) զինծառայողի զոհվելու օրվա դրությամբ սեփականության իրավունքով ընտանիքի անդամին պատկանող, ինչպես նաև զոհված զինծառայողին պատկանած և ժառանգության իրավունքով ընտանիքի անդամին անցած գյուղատնտեսական նշանակության հողի համար փաստացի վճարված անշարժ գույքի հարկի, այդ հողի ոռոգման ջրի վարձավճարի գումարի ամբողջական փոխհատուցում,

5) զինծառայողի զոհվելու օրվա դրությամբ սեփականության իրավունքով զոհված զինծառայողի ընտանիքի անդամին պատկանող, ինչպես նաև զոհված զինծառայողին պատկանած և ժառանգության իրավունքով ընտանիքի անդամին անցած անշարժ գույքի համար փաստացի վճարված անշարժ գույքի հարկի գումարի ամբողջական փոխհատուցում,

6) ընտանիքի անդամների բնակության վայրի հասցեում սպառված էլեկտրաէներգիայի և բնական գազի ծախսերի մասնակի փոխհատուցում՝ հաշվի առնելով այդ հասցեում բնակվող

ընտանիքի անդամների և այլ անձանց թիվը:

2. Զոհված զինծառայողի զավակի 25 տարին լրանալու դեպքում սույն հոդվածով երաշխիքները դադարում են:

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված հողը և 5-րդ կետում նշված անշարժ գույքը ընտանիքի անդամին պատկանում են ընդհանուր սեփականության իրավունքով, կամ սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված հասցեում հաշվառված է նաև ընտանիքի անդամ չհանդիսացող անձ, ապա հոդվածի 2-րդ մասում նշված փոխհատուցվող գումարը համամասնորեն նվազեցվում է: Սույն մասում նշված համամասնությունը որոշվում է փոխհատուցման ենթակա գումարը անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող կամ հասցեում հաշվառված անձանց թվի վրա բաժանելու և արդյունքը անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող կամ հասցեում հաշվառված՝ ընտանիքի անդամ չհանդիսացող անձանց թվով բազմապատկելու միջոցով:

4. Սույն հոդվածի 1-ին մասում նշված՝ վճարման կամ փոխհատուցման ենթակա գումարների չափերը, այդ գումարները տրամադրելու պայմանները և կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերում զինծառայողի երեխայի (զավակի) հետ համատեղ բնակվող՝ մյուս ծնողը և զոհված զինծառայողի 25 տարին լրացած երեխան համարվում է ընտանիքի անդամ (ընտանիքի անդամ չհանդիսացող անձանց թվաքանակում չի հաշվառվում):

Հոդված 9. Ընտանիքի անդամների այլ արտոնություններ

1. Զոհված զինծառայողի ընտանիքի անդամը ըստ անհրաժեշտության արտահերթ ընդունվում են բնակչության սոցիալական պաշտպանության և խնամքի պետական կազմակերպություններ (տուն-ինտերնատ, մանկատուն, ցերեկային սպասարկման կենտրոն, շուրջօրյա և ցերեկային խնամք մատուցող այլ պետական կազմակերպություններ):

2. Զոհված զինծառայողի նախադպրոցական տարիքի երեխան արտահերթ ընդունվում է (տեղափոխվում է) իր նախընտրած՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող նախադպրոցական ուսումնական հաստատություն (մանկապարտեզ)՝ անկախ բնակության վայրից:

3. Զոհված զինծառայողի ընտանիքի անդամը առողջապահական կազմակերպությունում պետական բյուջեի միջոցների հաշվին առողջապահական ծառայությունները ստանում է արտահերթ (անմիջապես):

4. Զոհված զինծառայողի երեխան ընդունվում է (տեղափոխվում է) իր նախընտրած՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություն (դպրոց)՝ անկախ բնակության վայրից:

5. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, այդ մարմինների ենթակայությամբ գործող նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունները, բնակչության սոցիալական պաշտպանության և խնամքի պետական կազմակերպությունները, առողջապահական կազմակերպությունները չեն կարող մերժել սույն հոդվածով նախատեսված արտոնությունների տրամադրումը: Սույն մասից բացառություն են կազմում այն դեպքերը, երբ այդ ուսումնական հաստատությունում ընդունելությունն իրականացվում է մրցութային կարգով գիտելիքների հիման վրա:

6. Սույն հոդվածով սահմանված արտոնությունները տրամադրելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 10. Ընտանիքի անդամի երաշխիքները տրամադրելը

1. Սույն օրենքով սահմանված երաշխիքներից օգտվելու համար դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են լիազոր մարմին: Դիմելու կարգը, անհրաժեշտ փաստաթղթերի և դիմումում ներառվող տեղեկությունների ցանկերը, այդ փաստաթղթերի վավերապայմանները (ներառվող տեղեկությունների կազմն ու բովանդակությունը) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Ընտանիքի՝ անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող անդամի փոխարեն դիմումը ներկայացնում է նրա օրինական ներկայացուցիչը:

3. Լիազոր մարմինը, ըստ անհրաժեշտության, սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում նշված մարմիններից և կազմակերպություններից ստանում է ընտանիքի անդամին համապատասխան երաշխիք տրամադրելու համար լրացուցիչ տեղեկություններ (փաստաթղթեր) և կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) համապատասխան երաշխիքը տրամադրելու մասին,

2) երաշխիք տրամադրելը մերժելու մասին:

4. Սույն օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածներում նշված երաշխիքները տրամադրելու մասին որոշում կայացնելու դեպքում լիազոր մարմինը համապատասխան գումարները փոխանցում է համապատասխան կազմակերպություններին, բանկերին կամ ընտանիքի անդամներին:

5. Սույն օրենքի 9-րդ հոդվածում նշված արտոնությունները տրամադրելու մասին որոշում կայացնելու դեպքում լիազոր մարմինը միջնորդագիր է ներկայացնում համապատասխան պետական կամ տարածքային կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարեի ղեկավարին:

6. Երաշխիք տրամադրելը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում լիազոր մարմինը այդ մասին տեղեկացնում է դիմողին:

7. Համապատասխան կազմակերպություններին, բանկերին կամ ընտանիքի անդամներին գումար փոխանցելու, երաշխիք տրամադրելը մերժելու դեպքերը և կարգը,

մերժելու մասին որոշում կայացնելու մասին դիմողին տեղեկացնելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 11. Ընտանիքի անդամի երաշխիքների հրապարակայնությունը

1. Լիազոր մարմինն իր պաշտոնական կայքէջում հրապարակում է այն զոհված զինծառայողների վերաբերյալ տեղեկություններ, ում ընտանիքի անդամին մատուցվել է սույն օրենքով սահմանված երաշխիքը:

2. Լիազոր մարմինը մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 1-ը իր պաշտոնական կայքէջում հրապարակում է ամփոփ հաշվետվություն՝ նախորդ օրացուցային տարվա ընթացքում սույն օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասում նշված միջնորդագրերի և դրանց արդյունքների վերաբերյալ:

3. Կայքէջում հրապարակվող՝ զոհված զինծառայողների վերաբերյալ տեղեկատվության և ամփոփ հաշվետվության կազմն ու բովանդակությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 12. Ընտանիքի անդամի երաշխիքները դադարելը, մարվող գումարի (վճարվող կամ փոխհատուցվող գումարի) չափը վերահաշվարկելը

1. Հիպոթեկային վարկը մարելու նպատակով ընտանիքի անդամի աջակցությունը դադարում է.

1) սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված ժամկետը լրանալու (զինծառայողի զոհվելու օրվան հաջորդող 18 ամիսների համար մայր գումարը և սպասարկման համար վճարվող տոկոսների գումարները վճարելու) կամ այդ ընթացքում՝ հիպոթեկային վարկի պարտավորությունը մարվելու դեպքում, կամ բնակելի անշարժ գույքի նկատմամբ ընտանիքի բոլոր անդամների (սույն մասի իմաստով՝ նաև զոհված զինծառայողի երեխաների մոր) սեփականության իրավունքը դադարելու դեպքում,

2) սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված հիպոթեկային վարկի պարտավորությունը մարվելու դեպքում, կամ բնակելի անշարժ գույքի նկատմամբ ընտանիքի բոլոր անդամների (սույն մասի իմաստով՝ նաև զոհված զինծառայողի երեխաների մոր) սեփականության իրավունքը դադարելու դեպքում:

2. Ընտանիքի անդամի որոշակի ծախսերի փոխհատուցումը դադարեցվում է սույն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում նշված հողի կամ 5-րդ կետում նշված բնակելի անշարժ գույքի նկատմամբ ընտանիքի բոլոր անդամների (սույն մասի իմաստով՝ նաև զոհված զինծառայողի երեխայի (զավակի) հետ համատեղ բնակվող՝ մյուս ծնողի) սեփականության իրավունքը դադարելու դեպքում:

3. Սույն օրենքով սահմանված երաշխիքները դադարում են ընտանիքի անդամի

մահվան դեպքում:

4. Սույն օրենքով սահմանված երաշխիքների շրջանակներում մարվող գումարի (վճարվող կամ փոխհատուցվող գումարի) չափը վերահաշվարկելու դեպքերը և կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 13. Պատասխանատվությունը սույն օրենքը խախտելու համար

1" Սույն օրենքը խախտողները պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Հոդված 14. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

2. Սույն օրենքով սահմանված երաշխիքները տրամադրվում են, եթե մարտական գործողությունները տեղի են ունեցել 2017 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո:

3. Մինչև 2017 թվականի հունվարի 1-ը տեղի ունեցած մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով զոհված զինծառայողի ընտանիքի անդամներին սույն օրենքով սահմանված երաշխիքները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում:

4. Սույն օրենքով սահմանված երաշխիքները տրամադրելու համար դիմումները ներկայացվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց 6 ամիս հետո:

5. Սույն օրենքի կիրակումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 5-ամսյա ժամկետում:

Հիմնավորում
«Հայրենիքի պաշտպանության համար զոհված զինծառայողի ընտանիքի անդամների երաշխիքների մասին» օրենքի նախագծի ընդունման

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Ներկայացվող նախագծերի նպատակը Հայրենիքի պաշտպանության համար զոհված զինծառայողի ընտանիքի անդամների համար լրացուցիչ սոցիալական երաշխիքների սահմանումն է:

2. Առկա իրավիճակը և խնդիրները.

Հանուն Հայրենիքի իրենց կյանքը զոհաբերած անձանց ընտանիքների անդամների բարեկեցիկ կյանքն ապահովելը Յուրաքանչյուր երկրի և ժողովրդի համար պետք է լինի պատվի և արժանապատվության հարց, իսկ յուրաքանչյուր պետության համար՝ առաջնահերթություն:

Արցախյան 44-օրյա պատերազմը մեզանից խլեց հազարավոր կյանքեր:

Հազարավոր կյանքեր խլելով՝ այն նաև խեղեց տասնյակ հազարավոր ճակատագրեր, անկատար թողեց տասնյակ հազարավոր նպատակներ և խորտակեց տասնյակ հազարավոր երազանքներ:

Բարոյահոգեբանական խնդիրներից զատ, Արցախյան 44-օրյա պատերազմը իր հետևից բերեց նաև բազում խնդիրներ իրական կյանքում այն ընտանիքների համար, ովքեր կորցրեցին ընտանիքի հիմնական կերակրողին:

Այսօր գործող օրենսդրությամբ սահմանված են որոշակի երաշխիքներ զոհված զինծառայողների ընտանիքների անդամների համար:

Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի համաձայն՝ զոհված զինծառայողների ընտանիքները ստանում են դրամական հատուցում, որի մի մասը՝ 10 մլն դրամը վճարվում է միանվագ, իսկ մնացած մասը՝ ամսական հավասար վճարներով 20 տարվա ընթացքում:

Համապատասխան երաշխիքներ և արտոնություններ են սահմանված նաև մի շարք այլ օրենքներով:

Որոշակի երաշխիքներ և արտոնություններ տրամադրվում են (տրամադրվել են) մասնավոր հատվածի կողմից (բանկեր, վարկային կազմակերպություններ, ուսումնական հաստատություններ և այլն):

Սակայն, վերը նշված երաշխիքները և արտոնությունները, դրանց տրամադրման ընթացակարգերը ոչ միշտ են կրում ինստիտուցիոնալ բնույթ:

Խնդրո առարկա է նաև այն հանգամանքը, բացակայում է այդ արտոնությունների և երաշխիքների տրամադրման համար պատասխանատու մեկ միասնական մարմինը:

Արդյունքում, շահառուն այս կամ այն երաշխիքից կամ արտոնությունից օգտվելու համար ստիպված է լինում բախել տարատեսակ դռներ:

Երբեմն, պոտենցիալ շահառուի համար մեծ դժվարություն է ներկայացնում ոչ միայն այս կամ այն երաշխիքից կամ արտոնությունից օգտվելը, այլև հենց այդ երաշխիքի կամ արտոնության ու դրանց տրամադրման ընթացակարգերի մասին տեղեկատվություն ստանալը:

Արդյունքում, երբեմն դրանք մնում են թղթի վրա, այսինքն՝ կրում են ձևական բնույթ:

3. Առաջարկվող լուծումները

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է ընդունել ներկայացվող նախագիծը:

Ներկայացվող նախագծով առաջարկվում է լրացուցիչ երաշխիքներ սահմանել Հայրենիքի պաշտպանության համար զոհված զինծառայողի ընտանիքի անդամների համար:

Մասնավորապես, առաջարկվում է հետևյալ երաշխիքները.

1) հիպոթեկային վարկը մարելու նպատակով ընտանիքի անդամի աջակցությունը,

2) ընտանիքի անդամի որոշակի ծախսերի փոխհատուցումը,

3) ընտանիքի անդամի այլ արտոնություններ:

Հիպոթեկային վարկը մարելու նպատակով ընտանիքի անդամի աջակցությունը ներառում է.

1) զոհված զինծառայողի հիպոթեկային վարկի պարտավորությունների մարումը՝ այդ թվում՝ զոհվելու օրվա դրությամբ ժամկետանց պարտավորությանների մարումը և վարկի ամբողջական մարումները զինծառայողի զոհվելու օրվան հաջորդող 18 ամիսների համար,

2) հիպոթեկային վարկով ձեռք բերված բնակելի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը զինծառայողի ընտանիքի անդամին անցնելու (ընտանիքի անդամի անվամբ գրանցվելու) դեպքում՝

ա. այդ օրվա դրությամբ վարկի ժամկետանց պարտավորությունների (մայր գումարի և սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների) միանվագ մասնակի մարումը,

բ. այդ օրվանից հետո հիպոթեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների մասնակի վճարումը,

3. զինծառայողի զոհվելու օրվա դրությամբ կամ դրանից հետո ընտանիքի անդամին տրված հիպոթեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների մասնակի վճարումը կամ այդ ուղղությամբ կատարված ծախսերի մասնակի փոխհատուցումը, եթե զինծառայողի ընտանիքի անդամներից մեկն ունի այդ հիպոթեկային վարկով ձեռք բերված բնակելի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք:

Ընտանիքի անդամի որոշակի ծախսերի փոխհատուցումը ներառում է.

1) ընտանիքի անդամի առողջապահական ծախսերի մասնակի փոխհատուցում,

2) ընտանիքի անդամի կրթական ծախսերի փոխհատուցում, այդ թվում՝ աշխարհի լավագույն հաստատություններում սովորելու ուսման վարձի և կեցության ծախսերի վճարում,

3) զինծառայողի զոհվելու օրվա դրությամբ ընտանիքի անդամին պատկանող գյուղատնտեսական նշանակության հողի համար փաստացի վճարված անշարժ գույքի հարկի, այդ հողի ոռոգման ջրի վարձավճարի գումարի ամբողջական փոխհատուցում,

4) զինծառայողի զոհվելու օրվա դրությամբ ընտանիքի անդամին պատկանող անշարժ գույքի համար փաստացի վճարված անշարժ գույքի հարկի գումարի ամբողջական փոխհատուցում,

5) ընտանիքի անդամների բնակության վայրի հասցեում սպառված էլեկտրաէներգիայի և բնական գազի ծախսերի մասնակի փոխհատուցում՝ հաշվի առնելով այդ հասցեում բնակվող ընտանիքի անդամների և այլ անձանց թիվը:

Ընդ որում, ծախսը չի փոխհատուցվում, եթե դրանք կատարվել են պետական և տեղական ինքնակառավարման բյուջեների միջոցների հաշվին:

Ընտանիքի անդամների այլ արտոնությունները ներառում են.

1) Զոհված զինծառայողի ընտանիքի անդամի իրավունքը՝ արտահերթ ընդունվելու բնակչության սոցիալական պաշտպանության և խնամքի պետական կազմակերպություններ, արտահերթ (անմիջապես) ստանալու առողջապահական ծառայություններ պետական բյուջեի միջոցների հաշվին, ստանում է արտահերթ (անմիջապես) (ըստ անհրաժեշտության),

2) Զոհված զինծառայողի երեխայի իրավունքը՝ արտահերթ ընդունվելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող նախադպրոցական ուսումնական հաստատություն (մանկապարտեզ), հանրակրթական ուսումնական հաստատություն (դպրոց)՝ անկախ բնակության վայրից:

Ընդ որում, վերոնշյալ արտոնություններից բացառություն են կազմում այն դեպքերը, երբ այդ ուսումնական հաստատություն ընդունելությունը իրականացվում է մրցութային կարգով՝ գիտելիքների հիման վրա:

Կարգավորվում են նաև սահմանված երաշխիքները տրամադրելու կարգը: Մասնավորապես, օրենքով սահմանված երաշխիքների տրամադրման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով սահմանվում է մեկ միասնական լիազոր մարմին և հստակեցվում են նրա լիազորությունները:

Ի թիվս այլ լիազորությունների՝ հստակ ամրագրվում է, որ լիազոր մարմինը համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ՝ **ապահովելով սույն օրենքով սահմանված երաշխիքների տրամադրումը:**

Սահմանվում է նաև, որ օրենքով սահմանված երաշխիքներից օգտվելու համար դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են լիազոր մարմին՝ անկախ այն հանգամանքից, թե որ մարմինն է տրամադրում երաշխիքը:

Լիազոր մարմինը, համապատասխան պետական մարմիններից և այլ կազմակերպություններից ստանում է երաշխիքներից օգտվելու համար անհրաժեշտ տեղեկություններն ու փաստաթղթերը և տրամադրում է երաշխիքը (փոխանցում է համապատասխան գումարը, եթե դիմում ներկայացվել է **հիպոթեկային վարկը մարելու աջակցություն ստանալու կամ որոշակի ծախսեր փոխհատուցելու համար**) կամ ներկայացնում է միջնորդություն համապատասխան պետական մարմնին (եթե դիմում ներկայացվել է Ընտանիքի անդամների այլ արտոնությունների համար):

Վերը նշված մոտեցումը նախ և առաջ նպատակ ունի նվազագույնի հասցնել բյուրոկրատական քաշքշուկը՝ խնդրո առարկա երաշխիքները տրամադրելով մեկ պատուհանի սկզբունքով (զոհված զինծառայողների ընտանիքները հայրենիքին վճարել են չափազանց բարձր գին, որպեսզի բախեն տարատեսակ դռներ):

Լիազոր մարմինն է նաև իրականացնում է զոհված զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամների կենտրոնացված հաշվառում, ինչը հնարավորություն կտա շարունակաբար բարելավել զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին երաշխիքների տրամադրման գործընթացի արդյունավետությունը:

Գործընթացի թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով սահմանվում է, որ Լիազոր մարմինն իր պաշտոնական կայքէջում հրապարակում է այն զոհված զինծառայողների տվյալները, ում ընտանիքի անդամին տրամադրվել է երաշխիքը: Միաժամանակ, Լիազոր մարմինը յուրաքանչյուր տարի հրապարակելու է ամփոփ հաշվետվություն՝ Ընտանիքի անդամների այլ արտոնությունների համար պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին կատարված միջնորդագրերի և դրանց արդյունքների վերաբերյալ:

4. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Նախագիծն ընդունվելու դեպքում օրենքով կսահմանվեն հայրենիքի պաշտպանության համար զոհված զինծառայողի ընտանիքի անդամների երաշխիքներն ու արտոնությունները, դրանց տրամադրման պայմաններն ու կարգը, ինչպես նաև ֆինանսավորման աղբյուրները:

Արդյունքում, համապատասխան պայմաններ կստեղծվեն զոհված զինծառայողների ընտանիքների բնականոն կենսագործունեությունն ապահովելու, իսկ այդ ընտանիքների առողջապահական և կրթական ծախսերը փոխհատուցելու միջոցով՝ այդ ընտանիքների համար կայուն ապագա կառուցելու համար:

Տեղեկանք
«Հայրենիքի պաշտպանության համար զոհված զինծառայողի ընտանիքի անդամների երաշխիքների մասին» օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացման կամ նվազեցման վերաբերյալ

«Հայրենիքի պաշտպանության համար զոհված զինծառայողի ընտանիքի անդամների երաշխիքների մասին» օրենքի նախագծի ընդունման դեպքում կավելանան Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի ծախսերը:

Անհրաժեշտ լրացուցիչ միջոցները հաշվարկել հնարավոր չէ՝ ելակետային տվյալների բացակայության պատճառով:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Օրենքների ընդունման դեպքում անհրաժեշտ է ընդունել «2023 թվականի պետական բյուջեի մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ինչպես նաև օրենքի կիրարկում ապահովող կառավարության որոշումներ: